ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔ

<< 16 >> ապրիլի 2013թվական

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ

ՆԻՍՏԸ ՎԱՐՈՒՄ Է՝ **Գյումրի համայնքի ղեկավար Ս.Մ.Բալասանյանը**

ՆԻՍՏԸ ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ Է՝ **Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի ժ/պ Ռ.Ասատրյանը**

ՆԻՍՏԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԵՆ՝ **Գյումրի համայնքի ավագանու անդամներ՝**
Ա.Ադամյանը, Գ.Ադամյանը, Ա.Բաղեյանը, Ա.Բաղրամյանը, Լ.Բարսեղյանը, Ա.Գրիգորյանը, Վ.Եդիգարյանը, Գ.Թաթարյանը, Հ.Խաչատրյանը, Հ.Կարապետյանը, Տ.Հովհաննիսյանը, Վ.Հունանյանը, Ռ.Մխիթարյանը, Է.Մկրտչյանը, Ե.Պողոսյանը, Մ.Սահակյանը, Ա.Վարդանյանը, Տ.Փանոսյանը

ՆԻՍՏԻՆ ՀՐԱՎԻՐՎԱԾ ԵՆ՝ Համայնքի ղեկավարի տեղակալներ՝ Ռ.Սանոյանը, Գ.Մալխասյանը, համայնքի ղեկավարի խորհրդականներ՝ Հ.Սարգսյանը, Ա.Բալաբեկյանը, Վ.Սուքիասյանը, Ա.Մովսեսյանը, համայնքի ղեկավարի օգնական Ռ.Համբարյանը, համայնքի ղեկավարի մամուլի քարտուղար Զ.Եգանյանը, քաղաքապետարանի աշխատակազմի՝ ֆինանսատնտեսագիտական բաժնի պետի ժ/պ Լ.Ջիլավյանը, բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժնի պետի ժ/պ Կ.Մանասյանը, քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի պետի ժ/պ Հ.Կարապետյանը, քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի պետի տեղակալ Հ.Գասպարյանը, ծրագրերի և վերլուծության բաժնի պետի ժ/պ Հ.Սուլթանյանը, ինքնակամ շինությունների և հողի վերահսկողության բաժնի պետ Ս.Ղազարյանը, առևտրի և սպասարկման ոլորտի համակարգման բաժնի պետի ժ/պ Կ.Բաղալյանը, մշակույթի և երիտասարդության հարցերի բաժնի պետ Ա.Կարապետյանը, կրթության բաժնի պետի ժ/պ Ա.Նախշքարյանը, ֆիզկուլտուրայի և սպորտի բաժնի պետի ժ/պ Մ.Ղազարյանը, տրանսպորտի բաժնի պետի ժ/պ Ա.Եղոյանը, համայնքային գույքի հաշվառման և կառավարման բաժնի պետի ժ/պ Ա.Դավթյանը, համատիրությունների մոնիտորինգի բաժնի պետի ժ/պ Շ.Շահնազարյանը, բյուջեի եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետի ժ/պ Ս.Մինասյանը, գովազդի բաժնի պետի ժ/պ Հ.Թադևոսյանը, իրավաբանական ապահովման բաժնի պետի ժ/պ Ա.Ղազարյանը, քարտուղարության բաժնի պետի ժ/պ Ն.Բարսեղյանը

ՆԻՍՏԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԵՆ ՆԱԵՎ՝
ԶԼՄ-ների ներկայացուցիչներ, ՀԿ-ներ (ցուցակը կցվում է)

Համայնքի ղեկավար Ս.Բալասանյանը, ողջունելով համայնքի ավագանու անդամներին, ներկայացրեց ավագանու նիստի օրակարգը:

ԼՍԵՑԻՆ.

1. **ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 16-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

(ԶԵԿ.Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ)

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հաստատել Գյումրի համայնքի ավագանու 2013 թվականի ապրիլի 16-ի նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 18
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

2. **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ՝ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ**

(ԶԵԿ.Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ, Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետի ժ/պ Լ.Ջիլավյանին:
Լ.Ջիլավյանը ներկայացրեց հարցը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ընդունել ի գիտություն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի՝ Գյումրի համայնքի 2013թվականի բյուջեի առաջին եռամսյակի կատարման ընթացքի մասին հաղորդումը՝ համաձայն NN 1-5 հավելվածի:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 18
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

3. ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 198-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետի ժ/պ Լ.Ջիլավյանին:

Լ.Ջիլավյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Գյումրի համայնքի ավագանու 2012թվականի դեկտեմբերի 27-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2013թվականի բյուջեի եկամուտների և ծախսերի հաշվեկշռվածությունը հաստատելու մասին>> N 198-Ն որոշմամբ հաստատված 2013 թվականի բյուջեի մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Գյումրի համայնքի 2013թվականի վարչական բյուջեի պահուստաֆոնդի առաջին եռամսյակի մնացորդը՝ 14010.6 հազար ՀՀ դրամը և երկրորդ եռամսյակի նախատեսված 53775.0հազար ՀՀ դրամը՝ ընդամենը 67785.6 հազար դրամ, ուղղել երկրորդ եռամսյակի ֆոնդային բյուջեով հաստատված գործառական և տնտեսագիտական դասակարգման ուղղություններին՝ համաձայն հավելված N 1-ի,

2) պակասեցնել 6/2/1 գործառական դասակարգման (շենքեր և շինությունների կառուցում) 5112 տնտեսագիտական դասակարգման հոդվածից 50միլիոն (հիսուն միլիոն) դրամ,

3) պակասեցնել 6/6/1 գործառնական դասակարգման այլ մեքենաներ և սարքավորումներ 5129 տնտեսագիտական դասակարգման հոդվածից 30միլիոն (երեսուն միլիոն) դրամ,

4) ավելացնել 4/5/1 գործառական դասակարգման (շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում) 5113 տնտեսագիտական դասակարգման հոդվածին 80միլիոն ՀՀ դրամ՝ համաձայն հավելված N 2-ի:

2. Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Լ.Ջիլավյանին՝ կատարել համապատասխան վերաբաշխումները:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 18
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

4. ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 24-Ի N 47-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետի ժ/պ Լ.Ջիլավյանին:

Լ.Ջիլավյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Գյումրի համայնքի ավագանու 2012թվականի մայիսի 24-ի <<Գյումրու քաղաքապետարանի կողմից ժամանակավոր տաղավարի ձեռք բերման նպատակով գումար հատկացնելու մասին>> N 47-Ա որոշման մեջ 1-ին կետում << ֆոնդային>> բառը փոխարինել <<վարչական>> բառով:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 18
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

5. <<ԳՅՈՒՄՐՈՒ ՄՈՐ ԵՎ ՄԱՆԿԱՆ ԱՎՍՏՐԻԱԿԱՆ ՀԻՎԱՆԴԱՆՈՑ>> ՓԲԸ-Ի ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ Գ.ՆԺԴԵՀ ՓՈՂՈՑ N 5/13 ՀԱՍՑԵՈՎ 0,61726 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ Գ.ՆԺԴԵՀ ՓՈՂՈՑ N 3/7 ՀԱՍՑԵՈՎ 0,35342 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՅՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՅՑՈՂ՝ ՀՐ.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի պետի ժ/պ Հր.Կարապետյանին:

Հր.Կարապետյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Ընդունել <<Գյումրու մոր և մանկան Ավստրիական հիվանդանոց>> փակ բաժնետիրական ընկերության սեփականությունը հանդիսացող (վկայական N 29082012-08-0195) Գյումրի քաղաքի Գ.Նժդեհ փողոց N 5/13 հասցեով 0,61726հա մակերեսով հողամասի նվիրատվությունը Գյումրու համայնքին:
2. Գյումրի քաղաքի Գ.Նժդեհ փողոց N 5/13 հասցեով 0,61726հա մակերեսով հողամասի նկատմամբ Գյումրու համայնքի սեփականության իրավունքը գրանցելուց հետո հողամասը նվիրել Հայաստանի Հանրապետությանը:
3. Գյումրու համայնքի սեփականությունը հանդիսացող (վկայական N 31082012-08-0143) Գյումրի քաղաքի Գ.Նժդեհ փողոց N 3/7 հասցեով 0,35342հա մակերեսով հողամասը նվիրել Հայաստանի Հանրապետությանը:
4. Նվիրատվությունների հետ կապված պայմանագրերի նոտարական վավերացման և պետական գրանցման ծախսերը կատարել հողօգտագործողների միջոցների հաշվին:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 17
դեմ – 0
ձեռնպահ – 1 (Լ.Բարսեղյան)
Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

6. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ ՀՐ.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի պետի տեղակալ Հ.Գասպարյանին:

Հ.Գասպարյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված և նրանց նկատմամբ համայնքի սեփականության իրավունքը ճանաչված շենք-շինությունները և նրանց պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած հողամասերը ուղղակի վաճառքի միջոցով օտարել տվյալ շինությունները կառուցողներին՝ ցուցակը համաձայն հավելվածի:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 18
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

7. ՄԱՐԶԱԿԱՆ ԱՎԱՆ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ 12,5 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՄՐՑՈՒՅԹՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ ՀՐ.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի պետի ժ/պ Հր.Կարապետյանին:

Հր.Կարապետյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

Համայնքի ղեկավարն առաջարկեց հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման ժամկետը 3-ի փոխարեն սահմանել 5 տարի:

Առաջարկն ընդունվեց:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Մարզական ավան կառուցելու նպատակով՝ Մարմաշենի խճուղու հարևանությամբ առանձնացված 12,5հա մակերեսով հողամասը մրցույթով կառուցապատման իրավունքի տրամադրման համար սահմանել վարձավճարի նախնական չափ՝ համաձայն հավելվածի:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 18
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

8. ՇԻՐԱԿԻ ԵՐԿՐԱԳԻՏԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻՆ ՆՈՐ ՇԵՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏԻՆ ՈՒՂԵՐՁ ՀՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՅՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ
ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄ Լ.ԲԱՐՍԵՂՅԱՆ
Ա.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և ձայնը տվեց ավագանու անդամ Լ.Բարսեղյանին:

Լ.Բարսեղյանը ներկայացրեց ուղերձի նախագիծը:

1930թվականին ստեղծված Շիրակի երկրագիտական թանգարանը ստեղծման օրվանից չի ունեցել սեփական շենքային պայմաններ և հիմա գործում է 1988թվականից վթարային, մասնակիորեն ամրացված, փոքր շենքում, մեծ ծավալի եզակի ցուցանմուշները կոնսերվացված են:

Թանգարանի ֆոնդերը տարեցտարի ավելանում են Շիրակի տարածքում իրականացվող հնագիտական պեղումներից հայտնաբերված նյութերով, սակայն առկա շենքային պայմանները խոչընդոտում են նոր նյութերի ընդունման և պահպանման գործընթացը: Թանգարանը չունի ցուցասրահ, որի պատճառով ազգային հարստություն հանդիսացող տասնյակ հազարավոր մասունքները մատչելի չեն հանրությանը:

Շիրակի երկրագիտական թանգարանի շենքի հարցի լուծման ճանապարհը նոր, որպես թանգարան նախագծված շենքի կառուցումն է, որը շատ ավելի հեռանկարային է և էժան, քան որևէ վթարային շենքի ամրացումը և հարմարեցումը:

Ներկայումս Գյումրիում ազատվել է «Գյուլբենկյան» վիրաբուժական հիվանդանոցի շենքը, որն իր տեղադրությամբ և չափերով, որոշ ներքին ձևափոխությունների դեպքում կարող է ծառայել որպես թանգարան:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ներկայումս թանգարանը ոչ միայն ի զորու չէ լիարժեք իրականացնել իր հիմնական գործառույթները, այլև չի կարողանում ակտիվորեն աջակցել աղետի գոտու վերականգնման, նոր աշխատատեղերի ստեղծման, տուրիզմի և ենթակառուցվածքների զարգացման ծրագրերի իրականացմանը, լայն հասարակության մշակութային մակարդակի բարձրացմանը, առաջարկում ենք «Գյուլբենկյան» վիրաբուժական հիվանդանոցի Գյումրու շենքը հատկացնել Շիրակի երկրագիտական թանգարանին՝ անժամկետ օգտագործման, մինչև պետությունը հնարավորություն կունենա թանգարանի համար նոր շենք կառուցելու:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 18
դեմ – 0
ձեռնպահ – 0
ուղերձն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

9. ԳՅՈՒՄՐՈՒ 1-ԻՆ ԳԵՐԵԶՄԱՆՈՑԻ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՐԶԵԼՈՒ ԵՎ, ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ, ԱՅԼ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԳՅՈՒՄՐՈՒ ԱՎԱԳԱՆՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԿԱԶՄԵԼՈՒ ԵՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ
ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄ Լ.ԲԱՐՍԵՂՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և ձայնը տվեց ավագանու անդամ Լ.Բարսեղյանին:

Լ.Բարսեղյանը ներկայացրեց որոշման նախագիծը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Գյումրի համայնքի ավագանու գիտության, կրթության, մշակույթի, երիտասարդության և սպորտի հարցերի մշտական հանձնաժողովին հանձնարարել իր կազմից ձևավորել ժամանակավոր հանձնաժողով՝ Գյումրու թիվ 1 գերեզմանոցում հուշարձանների հետ կապված իրադրության ուսումնասիրման համար: Հանձնաժողովում խորհրդակցական ձայնի իրավունքով ներգրավել կամավորներ Գյումրու մտավորականներից, ոլորտի մասնագետներից, հասարակական գործիչներից: Հանձնաժողովի ձևավորման վերջնաժամկետ սահմանել սույն որոշման ընդունումից հաշված՝ 10-րդ օրը:
2. Ժամանակավոր հանձնաժողովին հանձնարարել՝ ուսումնասիրություն կատարել Գյումրիի թիվ 1 գերեզմանոցի տարածքում, պարզել այդ գերեզմանոցում գտնվող վտանգված գերեզմանները, փաստագրել ու վավերագրել դրանք, պարզել վտանգվածության, վնասվածության և ոչնչացման ծավալները:
3. Սահմանել Գյումրու թիվ 1 գերեզմանոցի տարածքում թաղված նշանավոր մարդկանց գերեզմանների մոտ տեղադրվելիք տեղեկատու ցուցանակների ցանկը:
4. Կատարված աշխատանքների մասին զեկուցել Գյումրու ավագանու նիստում:
5. Վերոհիշյալ աշխատանքների համար սահմանել եռամսյա ժամկետ՝ հաշված ժամանակավոր հանձնաժողովի ստեղծման պահից:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 18
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

10. ՔԱՂԱՔԱՑԻ ՍՈՆՅԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ԱԹԱՐԲԵԿՅԱՆ ՓՈՂՈՑԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ 20,0 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ԳԾՈՎ ԳՈՅԱՑԱԾ ՏՈՒՅԺԸ ՆԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Կ.ԲԱԴԱԼՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի առևտրի և սպասարկման ոլորտի համակարգման բաժնի պետի ժ/պԿ.Բադալյանին:

Կ.Բադալյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ներել քաղաքացի Սոնյա Հարությունյանին վարձակալությամբ տրամադրված Աթարբեկյան փողոցի հարևանությամբ գտնվող 20,0 քառակուսի մետր մակերեսով հողամասի գծով գոյացած տույժը՝ առ 2012թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ, 9540 (ինը հազար հինգ հարյուր քառասուն) դրամ գումարով:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 18
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

11. ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԹՎՈՎ 24 /ՔՍԱՆՉՈՐՍ/ ԱՆՁԱՆՑ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՑՈՂ՝
Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝
Գյումրու ավագանու սոցիալական հարցերի
մշտական հանձնաժողովի համակարգող
Գ.Ադամյան)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և ձայնը տվեց **Գյումրու ավագանու սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի համակարգող Գ.Ադամյանին**:

Գ.Ադամյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Թվով 24(քսանչորս) անձանց՝ ցուցակը համաձայն հավելվածի, Գյումրի համայնքի բյուջեի այլ ծախսերից կանխիկ տրամադրել 280 000 (երկու հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 18
դեմ – 0
ձեռնպահ – 0
Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ ՕՐԱԿԱՐԳԻ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՀԱՐՑԵՐԸ

ԼՍԵՑԻՆ.

12. ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀԵՆԱՍՅՈՒՆԵՐԻ ՎՐԱ ՄԱԼՈՒԽՆԵՐԻ ԱՄՐԱԿՑՄԱՆ ՄԵԿ ԿԵՏԻ ՎԱՐՁՈՒՅԹԻ ՉԱՓ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ՄԻՆԱՍՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի բյուջեի եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետի ժ/պ Ս.Մինասյանին:

Ս.Մինասյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ.

Ավագանու անդամ Ա.Վարդանյանն առաջարկեց վարձույթի չափ սահմանել 500-1000 դրամ,

Ավագանու անդամ Լ.Բարսեղյանն առաջարկեց սահմանել կոնկրետ ֆիքսված չափ,

Համայնքի ղեկավար Ս.Բալասանյանն առաջարկեց սահմանել վարձույթի չափ 700-1000 դրամ,

ՈՐՈՇԵՑԻՆ.

Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող հենասյուների վրա մալուխների ամրակցման մեկ կետի վարձույթի չափը սահմանել՝ ամսական 700 (յոթ հարյուր) – 1000 (մեկ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 18
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

13. ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՎՃԱՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ա.ԴԱՎԹՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի համայնքային գույքի հաշվառման և կառավարման բաժնի պետի ժ/պ Ա.Դավթյանին:

Ա.Դավթյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող բնակելի տարածքների վարձակալության տրամադրման վճար սահմանել՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար ամսական 10 (տասը) Հայաստանի Հանրապետության դրամ:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 18
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

14. ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱԲՈՎՅԱՆ ՓՈՂՈՑԻ N 252 ՀԱՍՑԵԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԻՑ ՏԱՐԱԾՔ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԱՅՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՈՒՆ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ ՀՐ.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի պետի ժ/պ Հր.Կարապետյանին:

Հր.Կարապետյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող Աբովյան փողոց N 252 հասցեի շինության կիսանկուղային հարկից առանձնացնել 54.0քառ.մ մակերեսով տարածք և այն նվիրաբերել Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն (Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին)՝ որպես

Սուրբ <<Ամենափրկիչ>> եկեղեցու երիցատուն (գրասենյակային, կոմունալ հարմարություններ) օգտագործելու նպատակով:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 18
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

15. ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ, ԱՃՈՒՐԴԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ ՀՐ.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի պետի ժ/պ Հր.Կարապետյանին:

Հր.Կարապետյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հաստատել՝ Գյումրու քաղաքային համայնքի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, առանձնացված հողամասերի աճուրդային կարգով օտարելու նպատակով սահմանված մեկնարկային գներն ու պայմանները՝ համաձայն ցուցակի ձևով ներկայացված հավելվածի:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 18
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

16. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՐԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ա.ԲԱԼԱԲԵԿՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց համայնքի ղեկավարի խորհրդական Ա.Բալաբեկյանին:

Ա.Բալաբեկյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Ընդունել ի գիտություն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի կողմից Գյումրու քաղաքապետարանում իրականացրած վարչական հսկողության արդյունքների վերաբերյալ 2012թվականի նոյեմբերի 28-ի N ՎՀ 41 ակտը:

2. Ձեռնարկել համապատասխան միջոցառումներ ակտում նշված թերությունները և բացթողումները վերացնելու և այսուհետ դրանք բացառելու նպատակով:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 18
դեմ – 0
ձեռնպահ – 0
Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

17. ԱՐՏԱՎԱԶԴ ԱՇՈՏԻ ՓԵԼԵՇՅԱՆԻՆ «ԳՅՈՒՄՐՈՒ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՅՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ
ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄ Լ.ԲԱՐՍԵՂՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և ձայնը տվեց ավագանու անդամ Լ.Բարսեղյանին:

Լ.Բարսեղյանը ներկայացրեց որոշման նախագիծը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Արտավազդ Աշոտի Փելեշյանին շնորհել «Գյումրու պատվավոր քաղաքացի» կոչումը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 18
դեմ – 0
ձեռնպահ – 0
Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

18. ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԳՆՈՒՄՆԵՐԸ ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ ՇՈՒԿԱՅԻՑ, ՄԻՆՉԵՎ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԻ ԿԱՅԱՑՈՒՄԸ, ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ՝ ԱՌԱՆՑ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱՊԵՍ ՀՐԱՊԱՐԱԿԵԼՈՒ ՁԵՎՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Կ.ՄԱՆԱՍՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժնի պետի ժ/պ Կ.Մանասյանին:

Կ.Մանասյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Թույլատրել իրականացնելու տրանսպորտային սարքավորումների (մեկ ջրացան, երկու աղբատար, երեք ինքնաթափ, մեկ մարդատար մեքենաների և մեկ ավտովերելակի) անհետաձգելի համարվող գնումները բանակցային ընթացակարգի կիրառմամբ՝ առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու:

2. Թույլատրել անհետաձգելի համարվող գնումները իրականացնել երկրորդային շուկայից:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 18
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

19. ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 4-Ի N 154-Ա ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՏԸ ՉԵՂՅԱԼ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ ՀՐ.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի պետի ժ/պ Հր.Կարապետյանին:

Հր.Կարապետյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Չեղյալ ճանաչել Գյումրի համայնքի ավագանու 2012թվականի հոկտեմբերի 4-ի <<Համայնքային սեփականություն հանդիսացող շինությունները և հողամասերը օտարելու մասին>> N 154-Ա որոշմամբ հաստատված ցուցակի առաջին կետը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 18
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց